ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 2433-Ա/2 **«22» նոյեմբերի, 2023 թ.**

«ԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳԻՐ 2024» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 3-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել «Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«22» նոյեմբերի, 2023 թ.
N 2433-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**) կազմակերպում է **«Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ):**

Մրցույթն ուղղված է գիտության ոլորտի ղեկավար պաշտոններում կանանց կարողությունների զարգացմանը:

Մրցույթին մասնակցելու հայտ լրացնում և ներկայացնում է խմբի ղեկավարը՝ **Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի միջոցով (grants.hesc.am)՝ մինչև 2024 թվականի հունվարի 5-ը ներառյալ: **Հայտի** ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է **Կոմիտեի** պաշտոնական ինտերնետային կայքում (http://www.hesc.am/):

Պահանջվող փաստաթղթերը **Կոմիտե** են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 09:00-13:00 և 14:00-18:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 803 սենյակ), մինչև **2024 թվականի հունվարի 12-ը** ներառյալ:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեի** բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնում՝ աշխատանքային օրերին, ժամը 14:00-18:00, հեռախոս՝ +374 10 21-01-40 (118):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե